



# ԻՄԱՍՏՈՒՆ ՄԱՅՐԸ

Անգամ մը փոքրիկ քաղաքի մը մէջ կ'ապրէր խոնարհ ընտանիք մը: Օր մը այս ընտանիքին մանչ զաւակը կը ստիպուի գիւղ մը ճամբորդել աշխատանք փնտռելու նպատակով: Մինչ կը սկսի պատրաստուիլ, մայրը մտահոգիչ ձայնով կ'ըսէ.

- Տղա՛ս, ինչո՞ւ առանձին կը ճամբորդես: Ճանապարհոյ անտառներու մէջ է եւ այդտեղ կրնաս փորձանքի մը հանդիպիլ:
- Մի՛ մտահոգուիր, մայրի՛կ: Վախնալու պէտք չկայ, այդ անտառներուն մէջ ո՛չ վայրի կենդանիներ կան, ո՛չ ալ գողեր: Գործս աւարտելուն պէս վաղը երեկոյեան կը վերադառնամ,- ինքնավստահօրէն կը պատասխանէ տղան:

Այնուամենայնիւ, մայրը կը մօտենայ իրենց տան մօտ գտնուող լճակին ու այդ լճակէն ան խեցգետին մը կ'առնէ ու կը խնդրէ զաւակէն որ իր հետ առնէ զայն ճամբուն ընթացքին, ըսելով.

- Ես չեմ ընդունիր որ առանձին երթաս, հետեւաբար, ա՛ն այս խեցգետինը եւ քովդ պահէ՛ ճամբորդութեանդ ընթացքին: Տղան շատ չի համոզուիր խեցգետինը իր հետ տանելու, սակայն մօրը չմերժելու համար ան կ'առնէ խեցգետինը եւ կը պահէ տոպրակի մը մէջ ու կը մեկնի:

Ամառնային տաք կեսօր մը երկա՛ր ճանապարհ կտրելէ ետք, տղան այլեւս չի դիմանար եւ հսկայ ծառի մը շուքին տակ կ'ուզէ հանգստանալ, ապա կրկին շարունակել, երբ արեւուն ճառագայթները թեթեւան:

Տղան կը բանայ իր ուտեստդէնի ծրարը, մէջէն կը հանէ հաց ու պանիր, կ'ուտէ եւ այնքա՛ն որ յոգնած է, շուտով կը քնանայ: Յանկարծ տղուն քնացած պահուն, ծառին վրայէն օձ մը ուտելիքներու հոտեր առնելով, դուրս կու գայ իր բոյնէն եւ կը սկսի տղուն ու իր հետ եղած ծրարին մօտենալ: Ան կը շնչէ անուշ հոտերը ու անոնց ուղղութեամբ աւելի ու աւելի կը մօտենայ, մինչեւ որ կը պահուրդի ծրարին մէջ:

Օձին միակ նկատողը կ'ըլլայ խեցգետինը, որ տեսնելով զինք կը բարկանայ եւ անմիջապէս կը խայթէ օձին:

Վերջապէս, օձը թունաւորուած կը սպանուի: Որոշ ժամանակ անցնելէն ետք, տղան կ'արթննայ: Ան յանկարծ կը նայի պայուսակին եւ կը տեսնէ սեւ օձ մը, որ սպանուած էր իր ծրարին մէջ:

Տղան երկա՛ր շունչ մը կը քաշէ եւ ինքնիրեն կը մտածէ.  
 - Այս խեցգետինը իմ կեանքս փրկեց օձէն... ան նաեւ ի սրտէ շնորհակալութիւն կը յայտնէ խեցգետինին:  
 Այս դէպքէն ետք տղան կը զգայ, որ իսկապէս պէտք է միշտ մօրը խօսքը մտիկ ընէ ու հնազանդ ըլլայ անոր:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՏՆԵՆ-ՇԱՀԻՆԵՆ  
 ՆԿԱՐԱՍԱՐԻՑ՝ ՈՒՅՅԻ ԲԵՇՈՇԵՆ

# ՈՒՍՈՒՑԻՉ ԸԼԼԱՎ

ՉԱՅՐԱՏ

Ուսուցիչ ըլլալ  
 Եւ սորվիլ ուզող ուղեղներէն ներս  
 Նոր գիտելիքներ ներմուծել ջանալ  
 փորձե՞ր էք բնաւ  
 Չէք գիտեր ինչ խոր հաճոյք է - կը զգաք  
 Յեղ մը որ համը առիք,- այրեցա՛ք,-  
 Չէք կրնար դիւրաւ պրծիլ ազատիլ  
 Ձեզի ո՞վ ըսաւ ուսուցիչ ըլլաք  
 Ձեր ու սան կոչուած


Այդ փայլուն աչքով դէմքերուն միջեւ  
 Սիրոյ կամուրջ մը կը շինուի տակաւ  
 - Ա՛լ ուրիշ ճամբայ չկայ ձեր առջեւ  
 թակարդը ինկաք  
 Կը դառնաք դառնաք ու նորէն հոն էք  
 Փորձե՞ր էք բնաւ  
 Նոր գիտելիքներ ներմուծել ջանալ  
 Բան սորվիլ ուզող ուղեղներէն ներս  
 Սիրոյ կամուրջէն անցե՞ր էք բնաւ



Իւրաքանչիւրին քով արձանագրե՛ր  
 ներկուած բաժնին կոտորակը:

	$\frac{1}{4}$		—
	—		—
	—		—
	—		—
	—		—

Պատասխաններուն համեմատ,  
 ներկե՛ր ձկնիկը:



Կապոյտ	Կանաչ	Կարմիր	Դեղին
$6+6=$ <input type="text"/>	$10+3=$ <input type="text"/>	$17+4=$ <input type="text"/>	$6+4=$ <input type="text"/>
$10+5=$ <input type="text"/>	$11+6=$ <input type="text"/>	$12+10=$ <input type="text"/>	$15+15=$ <input type="text"/>
$7+7=$ <input type="text"/>	$13+7=$ <input type="text"/>	$9+9=$ <input type="text"/>	$25+4=$ <input type="text"/>
$15+10=$ <input type="text"/>	$18+9=$ <input type="text"/>	$22+4=$ <input type="text"/>	$15+13=$ <input type="text"/>

Կրնա՞ս ամբողջացնել:

- 60 \_\_\_\_\_ = 1 ժամ
- \_\_\_\_\_ երկվայրկեան = 1 վայրկեան
- 1 վայրկեան = 60 \_\_\_\_\_
- 12 \_\_\_\_\_ = 1 տարի
- 7 \_\_\_\_\_ = 1 շաբաթ
- 365 օր = 1 \_\_\_\_\_
- 1 տարի = 12 \_\_\_\_\_
- 52 \_\_\_\_\_ = 1 տարի

# ՔԱՉ ՆԱՉԱՐ

Յովհաննես Թումանյան

Մարդիկ մէյ մըն ալ կը նային, ի՞նչ տեսնեն. Քաջ Նազարը վագրին վրայ նստած կը սուրայ...:

- Յէ՛յ, եկէ՛ք, եկէ՛ք, տեսէ՛ք Քաջ Նազարը վագրին վրայ նստած ձիու պէս կը քշէ... գարկէ՛ք, հա գարկէ՛ք...:

Ամենքն ալ քաջութիւն կ'առնեն, պոռալով կանչելով կը յարձակին վագրին վրայ, քարով, փայտով, դանակով, սուրով կը զարնեն, կը սպանեն գազանը:

Նազար երբ ինքզինքը կը գտնէ քիչ մը, լեզուն կը բացուի.

- Ա՛խ,- կ'ըսէ,- ինչո՞ւ սպանեցիք... հազիւ ինծի յարմար ընտիր ձի մը գտեր, նստեր էի...:

Լուրը մինչեւ բերդ կը հասնի: Այր, կին, մեծ, պզտիկ, ժողովուրդ դուրս կը թափին Նազարը դիմաւորելու համար:

Եւ Քաջ Նազարը կ'ամուսնացնեն հսկաներուն գեղեցիկ քրոջը հետ: Եօթը օր, եօթը գիշեր հարսնիք կ'ընեն, երգերով կը հիւսեն գովեստը թագաւորին ու թագուհիին:

Քայց եկուր տե՛ս որ դրացի երկրի թագաւորը նախապէս ուզած է եղեր այդ աղջիկը: Երբ կը լսէ թէ իրեն չեն տուած եւ ուրիշի մը հետ ամուսնացուցած են, բանակը կը ժողվէ եւ պատերազմի կու գայ եղբայրներուն վրայ:

Եօթը հսկաները կ'երթան Քաջ Նազարին կը հաղորդեն պատերազմի լուրը, եւ խոնարհելով անոր առջեւ՝ հրամանի կը սպասեն:

Պատերազմի խօսքը լսելուն պէս կը վախնայ Նազար. տեղէն կը ցատկէ, դուրս կը փախչի, կ'ուզէ երթալ պահուըտիլ իրենց գիւղը: Իսկ մարդիկ կը կարծեն, թէ ան կ'ուզէ իսկոյն յարձակիլ թշնամի բանակին վրայ: Ետեւէն կ'իյնան, կը բռնեն ու կը խնդրեն.

- Ո՞ւր կ'երթաս, ի՞նչ կ'ընես, առանց գէնքի զրահի մինակդ ո՞ւր կը վագես, խե՛ղք թոցուցիր ինչ է...:

Կը բերեն գէնք ու զրահ, կինն ալ եղբայրներէն կը խնդրէ, որ չձգեն Նազարը քաջութենէն տարուած՝ մինակը երթայ յարձակի թշնամի բանակին վրայ:

Այս լուրը կը տարածուի բանակին եւ ժողովուրդին մէջ, լրտեսներու միջոցով ալ կը հասնի թշնամիին՝ թէ Քաջ Նազար առանձին կը վագեր պատերազմի դաշտ, թէ հազիւ կարողացած են զսպել, ու հիմա զինուորներով շրջապատուած կը բերեն՝ որպէսզի աշխարհը տակնուվրայ չընէ...:

Պատերազմի դաշտին վրայ անհնազանդ ու վայրի ձի մը կը քաշեն Նազարին տակ, կը նստեցնեն վրան:



Չինուորներն ալ կը քաջալերուին աշտանակած տեսնելով Նազարը, եւ ահագին աղմուկով կը գոռան.

- Կեցցէ՛ Քաջ Նազար.. մա՛հ թշնամիին...:

Վայրի ձիւն, երբ կը զգայ թէ անպիտանին մէկն է հեծած վրան, կը խրխնջայ, կը վրնջէ ու գլուխը կ'առնէ կ'երթայ դէպի թշնամի բանակը: Չինուորները կը կարծեն թէ Քաջ Նազար յարձակման անցաւ, «հուռռա՛» կը պոռան ու իրենց ամբողջ թափով յառաջ կը նետուին:

Նազար, որ չի կրնար զսպել վայրի ձիւն, վար չիյնալու համար կ'ուզէ փաթթուիլ ծառի մը ճիւղին. բայց եկո՛ւր տես որ ծառը փտած է եղեր, ահագին գերանի չափ ճիւղը կը կոտորի, կը մնայ ձեռքը...:

Թշնամի զինուորները, որոնք արդէն նախապէս անոր համբաւը լսած էին եւ վախը փորերնին էր, երբ իրենց աչքերով կը տեսնեն պատահածը՝ բոլորովին կը վախնան ու երես կը դարձնեն կռիւն:

- Փախի՛ր, հա՛ փախիր. ով որ կրնայ՝ թող ազատէ իր հոգին... Քաջ Նազարը կու գայ ծառերը արմատախիլ ընելով... վա՛խ:

Այդ օրը թշնամիէն շարդուելիքը շարդուեցաւ. ըստ բախտի ազատողները իրենց սուրերը դրին Քաջ Նազարի ոտքին տակ:


Արիւնահեղ պատերազմի դաշտէն հսկաներու բերդը վերադարձաւ Քաջ Նազար: Անբացատրելի ուրախութեամբ, հուռռաներով, կեցցէներով, երածշտութիւնով, դիմաւորեցին զինքը: Այդքան փառք ու պատիւի դիմաց՝ Նազար մնաց ապշած ու շշմած:

Յետոյ, մեծ շուքով եւ ուրախութեամբ զինքը անուանեցին թագաւոր եւ նստեցուցին թագաւորական գահին վրայ: Կ'ըսեն թէ՛ մինչեւ այսօր ալ դեռ կ'ապրի ու կը թագաւորէ Քաջ Նազարը: Ու երբ իր քով կը խօսին քաջութեան, խելքի, հանճարի մասին, ան կը խնդայ ու կ'ըսէ.

- Ի՞նչ քաջութիւն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճար. պարապ բաներ են ատոնք: Կարելորդ՝ մարդուս բախտն է: Բախտ ունի՞ս... գործը կարգին է:

Եւ կ'ըսեն թէ մինչեւ այսօր ալ Քաջ Նազարին գործը կարգին է եւ կը ծիծաղի աշխարհի սուտ ու փուտ բաներուն վրայ:

(Վերջ)



# ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ



Նապաստակները 50-60 ս.մ. երկարությամբ կաթնասուն կենդանիներ են: Անոց ականջները՝ երկար, իսկ պոչերը կարճ են: Մոխրագույն կամ սպիտակ կ'ըլլան:

Բոյսերով կը սնին:

Թե՛ գորշ, թե՛ սպիտակ նապաստակները կ'ունենան 3-6 ձագ, որոնք կը ծնին բաց աչքերով, աղուամազով ծածկուած, շարժելու ունակ եւ քանի մը օր անց պատրաստ՝ ինքնուրոյն սնուելու:

Նապաստակին կաթը շատ սնդարար է, 6 անգամ անելի իւղոտ է, քան կովու կաթը, այնպէս որ ձագերը 1 անգամ կերակրելէ ետք, 3-4 օր կուշտ կը պահէ զանոնք:

10-12 տարի կ'ապրին:

Նապաստակներուն միսը համեղ է: Անոնք ուտելիք կը հանդիսանան գիշատիչներուն համար, որոնք են՝ գայլերը, աղուեսները, առիւծները, օձերը, բուերը, արծիւներն ու բազէները:

